ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՁՅՈՒՆԱՇՈՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Լոռու մարզ գ. Ձյունաշող
Dzyunashogh.lori@mta.gov.am

№ 93

« 26» 12. 2016 թ.

Լոռու մարզպետ `
պարոն Ա. Նալբանդյանին

Կից ներկայացնում եմ Ձեզ Ձյունաշող համայնքի ավագանու « 22» 12. 2016 թ. № 20-Ն, « 22» 12. 2016 թ. № 21-Ա և որոշումները :

Ձյունաշողի գյուղապետ՝ Գ. Գրիգորյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՅՈՒՆԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Լոռու մարզ գ. Ձյունաշող
Dzyunashogh.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 22 » դեկտեմբեր 2016 թվականի N 20-Ն

## ՁՅՈՒՆԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10 -Ի <<ՁՅՈՒՆԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 20-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, << Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով՝ Ձյունաշող համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ձյունաշող համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 10 -ի << Ձյունաշող համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 20-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1-ից թիվ 6 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ծատուրյան Ծաղիկ Արամայիսի | [signature] | | |
| Հարությունյան Լեոնիդ Ալբերտի | [signature] | | |
| Ղեյվոնդյան Կարեն Բորիսի | [signature] | | |
| Սարգսյան Մարետա Միխայլի | [signature] | | |
| Սարկիսովա Սվետլանա Սերգեյի | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature] Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՁՅՈՒՆԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Լոռու մարզ գ. Ձյունաշող
Dzyunashogh.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**« 22» դեկտեմբեր 2016 թվականի N 21 - Ա**

## ՁՅՈՒՆԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետով համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Ձյունաշող համայնքի 2017-2021 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը համաձայն հավելվածների:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ծատուրյան Ծաղիկ Արամայիսի | [signature] | | |
| Հարությունյան Լեռնիկ Ապրեսի | [signature] | | |
| Ղեյվոնդյան Կարեն Բորիսի | [signature] | | |
| Սարգսյան Մարետա Միխայլի | [signature] | | |
| Սարկիսովա Սվետլանա Սերգեյի | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature] Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ՁՅՈՒՆԱՇՈՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

# 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Հաստատվել է՝ համայնքի ավագանու **22.12.2016** թ. թիվ **21-**Ա որոշմամբ

ՁՅՈՒՆԱՇՈՂ **2017** Թ.

# Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք ........ 3

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն ........ 5

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն ........ 5

2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը ........ 7

2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը ........ 7

2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները 8

2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ ........ 8

2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն ........ 11

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում ........ 12

3.1. Համայնքիզարգացմանտեսլական ........ 12

3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ ........ 12

4. ՀԶԾ ֆինանսավորում ........ 16

5. ՀԶԾ մոնիթորինգ ........ 17

## 1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

*Միրով ողջունում եմ Ձյունաշող համայնքի ազգաբնակչությանը:* Ձեզ եմ ներկայացնում Ձյունաշող համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը: Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձյունաշող համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագրի ընդունման նպատակն է սահմանել համայնքի տեսլականը 2021 թվականին, այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական նպատակները: Համայնքի զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները (ակտիվները), պարտավորությունները, տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Համայնքի զարգացման ծրագիրն իր մեջ ներառում է՝ համայնքի իրավիճակի բնութագիրը, վերլուծությունը և գնահատումը, համայնքի տեսլականը, ռազմավարության և ՀԶԾ-ի հիմնական նպատակների սահմանումը, նախատեսվող հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերը, ֆինանսական իրավիճակի վելուծությունը, գնահատումը և կանխատեսումը, ոլորտային ծրագրերը, գույքի կառավարման ծրագիրը, զարգացման ծրագրի մոնիթորինգը:

*Հուսով եմ ,որ սատար կկանգնեք, որպեսզի կարողանանք իրականցնել մեր առջև դրված խնդիրները , համայնքը դարձնել բարեկեցիկ և զարգացած համայնք:*

*Կանխավ շնորհակալ եմ բոլոր այն գործարարներին,համայնքաբնակներին և շահագրգիռ կազմակերպություններին և անհատներին,որոնք կօգնեն համայնքի զարգացման ծրագրերի իրականացմանը,հասարակական կյանքի ակտիվացման գործընթացներին:*

- ***Գալիք հինգ տարում համայնքի զարգացման ծրագրային հիմնական ուղղություններն են***
- *Բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական իրավիճակը*
- *Համայնքում զարգացնել գյուղատնտեսությունը*
- *Հատուկ ուշադրություն դարձնել կրթությանը, մշակույթի զարգացմանը*
- *Միջոցներ ձեռնարկել համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ.*
- *Նպատակային օգտագործել համայնքային բյուջեի միջոցները*
-

- ***Համայնքում առկա հիմնախնդիրները***
  - *Բնակչության սոցիալապես անապահով վիճակ*
  - *Առկա գյուղատնտեսական տեխնիկայի բացակայում*
  - *Խմելու ջրի արտաքին և ներքին ցանցերի մաշվածություն*

- *Ճանապարհների անմխիթար վիճակ*
- *Աշխատատեղերի բացակայություն*
- *Մանկապարտեզի շենքի բացակայություն*
- *Դպրոցի շենքի վերանորոգում*
- *Գիշերային լուսավորության կառուցում*
- Տրանսպորտի բացակայություն
- Գազի բացակայություն
- Անբարենպաստ կլիմայական պայմանների պատճառով գյուղացու եկամուտների ցածր մակարդակ

Ծրագրի մշակմանը մասնակցել են համայնքապետարանի աշխատակազմի բոլոր ստորաբաժանումները և համայնքի ավագանին, քննարկվել ու հաշվի են առնվել հանրային լսումների արդյունքում կատարված բոլոր առաջարկությունները: Ծրագիրը հաստատվել է համայնքի ավագանու անդամների կողմից:

## 2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

### 2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

2.1 Ջյունաշող համայնքը հիմնադրվել է 1870 թ-ին, վերաբնակեցվել է 1989թ. Ադրբեջանից բռնագաղթված հայերի կողմից: Ջյունաշող համայնքը գտնվում Վրաստանի սահմանից 2 կմ. հեռավորության վրա,հարևանությամբ Ադրբեջաբնակ Իրգանչայ գյուղն է,սահմանի երկարությունը կազմում է 8 կմ: Համայնքը գտնվում է ծովի մակարդակից 1500-1600 մ բարձրություն վրա: Համայնքի զբաղեցրած լեռնային տեղանքին բնորոշ է ռելիեֆի կտրտվածությունը: Գյուղի տարածքում ռելիեֆի թեքությունները տարբեր են, փոքրաթեք լանջերից մինչև 40-45 0: Համայնքի ճանպարհների տարածքով միջպետական ճանապարհներ չեն անցնում,երկաթուղային գծեր չկան: Համայնքի ընդհանուր ճանապարհների երկարությունը կազմում է` 6 կմ: Համայնքի հեռավորրությունը մարզկենտրոնից` 80 կմ, շրջկենտրոնից 18 կմ: Գյուղի վարչական տարածքը կազմում է 1423.33 հա, որից վարելահողեր` 426.38հա, խոտհարք` 737.25 հա, արոտավայր` 236.60 հա և այլ հողատեսքեր`23.10:

***Համայնքի հողատարածքը***

| | *ՀՀ Լոռու մարզի Ջյունաշող համայնքի հիմնական հողային ռեսուսները* | հա |
|---|---|---|
| 1. | *Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը որից* | 1693.97 |
| 2. | *Բնակավայրի հողեր* | 70.06 |
| 3. | *Գյուղատնտեսական նշանակության հողեր* | 1423.33 |
| 4. | *Անտառային հողեր* | 150.04 |
| 5. | *Արդյունաբերության,ընդերքօգտագործման և այլ արտադրական հշանակության հողեր* | 17.13 |
| 6. | *Առողջապահական,հանգստավայրերի ,մարզական ու պատմամշակութային նշանակության հողեր* | 5.85 |
| 7. | *Ճանապարհի տակ հողեր* | 5.18 |
| 8. | *Ջրային հողեր* | 6.74 |
| 9. | *Այլ* | 15.64 |

Համայնքի կլիման մեղմ է, բարեխառն; Ձմռանը ցրտաշունչ է, հիմնականում կայուն ձյունածածկով, ամռանը զով է: Հունվարին միջին ջերմաստիճանը` -18 է, հուլիսին`+20: Նվազագույն ջերմաստիճանը -320c, առավելագույնը` +360c: Շնորհիվ մեղմ կլիմայի ունի փարթամ բուսականություն: Պահպանված անտառներում հանդիպում են հաճարենի, կաղնի, լորենի և այլն:

- 1.2.*ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ*

1.Զյունաշող համայնքը ունի 43 առկա տնտեսություն

Համայնքի բնակչությունը կազմում է 135 մարդ, որոնցից՝

Կանայք—72

Տղամարդիկ—63

2. Բնակչության տարիքային կազմը՝

0-6 տարեկան- 4

7-17 տարեկան -24

18-63 տարեկան -91

63-ից բարձր -16

3. Բնակչության սոցիալական կազմը

Թոշակառուներ -22

Միակողմանի ծնողազուրկ երեխաներ -2
Հաշվանդամներ -8
Սոցիալական նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ 6

Աշխատունակ բնակչության թիվը կազմում է` 71 մարդ, որոնցից վարձատրվող աշխատանքով զբաղված են`22 մարդ: Բնակչությունը հիմնականում զբաղվում է հողագործությամբ և անասնապահությամբ:

- Համայնքում կա ՝

| Անասունների տեսակ | Գլխաքանակ |
|---|---|
| Խոշոր եղջերավոր անասուններ | 456 |
| Այդ թվում կովեր | 198 |
| Մանր եղջերավոր անասուններ | 160 |
| Խոզեր | 3 |
| Թռչուններ | 445 |
| Ձիեր | 10 |

-Համայնքում գործում է 1 միջնակարգ դպրոց ,որն ունի 22 աշակերտ,16 աշխատող որից` ուսուցիչներ`9-ը: Համայնքում գործում է 1 բուժկետ ,աշխատողների թիվը`1 բուժքույր և 1 փոստային բաժանմունք աշխատողների թիվը`1:Համայնքն ունի մշակույթի տուն ,սակայն չի գործում:Չկա խանութներ,արդյունաբերական գյուղատնտեսական կազմակերպություններ:

-Համայնքում կա  էներգամատակարարում, ջրամատակարարում, չկա գազամատակարարում:

-Համայնքի տնտեսական ցուցանիշներն են. 2016 թ.նոյեմբերի 1- դրությամբ համայնքում եկամուտ են ստացել.

| Գյուղատնտեսական արտադրանքի տեսակը | Ցանքատարածության չափը (հա) | Արտադրանքի քանակը (ցենտներ) |
|---|---|---|
| կարտոֆիլ | 9 | 490 |
| բանջարեղեն | 3 | 30 |
| խոտ | 250 | 8000 |
| ցորեն | 317 | 8595,5 |
| | | |

**Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը**

2.2. Համայնքի բյուջեն հիմնականում ձևավորվում է հողի հարկից, գույքահարկից, համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներից, գույքի վարձակալության եկամուտներից և պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայից, նպատակային հատկացումներից (սուբվենցիաներ):

- Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 7706.3 դրամ:
- Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 4044.3 դրամ( 52,5 %),

2.3. *Համայնքում իրականա*ցվող ծրագրերը

**1.Ջրագծի ներքին ցանցի վերանորոգում**

**2.Ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում**

**3.Ներհամայնքային ճանապարհների և փողոցների արտաքին լուսավորության համակարգի անցկացում**

Պետության կողմից իրականացվող միջոցառումները խթանում են համայնքի երեխաների կրթության զարգացմանը:

Միջազգային կազմակերպությունների ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի պարագայում կմեծանա երեխաների ակտիվությունը, ճանաչողությունը և ապագայում նրանց մասնակցությունը համայնքային խնդիրների լուծմանը:

## 2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

| N | Եկամուտի տեսակը | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը եկամուտներ | 7935.3 | 7935.4 | 7935.6 | 7935.7 | 7935.9 |
| Ա | Հարկային եկամուտներ | 2759.3 | 2759.4 | 2759.5 | 2759.7 | 2759.9 |
| 1 | Հողի հարկ | 2586,4 | 2590,0 | 2590.5 | 2595.0 | 2600.0 |
| 2 | Գույքահարկ | 211,9 | 221,0 | 230.0 | 240.0 | 250.0 |
| 3 | Եկամտահարկ | | | | | |
| 4 | Այլ հարկային եկամուտներ | | | | | |
| Բ | Տուրքեր | | 6.0 | 7.0 | 8.0 | 9.0 |
| 1 | Պետական տուրքեր | | | | | |
| 2 | Տեղական տուրքեր | | | | | |
| Գ | Ոչ հարկային եկամուտներ | | | | | |
| 1 | Վարձավճարներ | 1240,0 | 1245,0 | 1250,0 | 1260,0 | 1270,0 |
| 3 | Տեղական վճարներ | | | | | |
| 4 | Այլ ոչ հարկային եկամուտներ | | | | | |
| Դ | Դոտացիա | 3500.0 | 3700.0 | 3900.0 | 4000.0 | 4500.0 |
| Ե | Եկամուտներ կապիտալ գործառություններից | | | | | |
| Զ | Տարեսկզբի ազատ մնացորդ | | | | | |

## 2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Զյունաշող համայնքի առջև ծառացած ընդհանուր հիմնական խնդիրներն են՝

Համայնքի զարգացման հիմնական խոչընդոտող գործոններն ու դժվարությունները նշված են ստորև.

1) Գործարար միջավայրի բարելավմանը և ձեռնարկատիրության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման դժվարությունը,

.Համայնքի գույքի կառավարման խոչընդոտներն են՝

.Ֆինանսական սղությունը,

2) Երիտասարդության ներգրավմամբ ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպման խոչընդոտող գործոններն են՝

.մշակութային կյանքի պասիվությունը,.

3) ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսմանը խոչընդոտող գործոններն են՝

.սպորտհրապարակ, մարզադահլիճ և մարզագույք չունենալը

4) Համայնքի բնակավայրերի կառուցապատմանը, բարեկարգմանը և կանաչապատմանը, համայնքի աղբահանությանը և սանիտարական մաքրմանը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովմանը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանմանը և գործունեության ապահովմանը խոչընդոտող գործոններն են՝

.խմելու ջրագծի և ջրի ներքին ցանցի քայքայված վիճակը,

.միջոցների սղությունը,

.փողոցային լուսավորության բացակայությունը:

5) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպմանը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանմանը և շահագործմանը խոչընդոտող գործոններն են՝

.համայնքային ճանապարհների քայքայված վիճակը,

6) Պետության պաշտպանության իրականացման աջակցմանը խոչընդոտող գործոններն են՝

.հայրենասիրական,պետական մտածողության պակասը, գյուղաբնակների ամենօրյա զբաղվածությունը անասնապահության մեջ, տրանսպորտային միջոցների ոչ սարքին վիճակը:

7) Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը խոչընդոտող գործոններն են՝

.սեյսմիկ գոտում գտնվելը,

.աղետներին պատրաստվածության ծրագրի բացակայությունը,

.համայնքաբնակները պատրաստ չեն համապատասխան քայլերի դիմել վերահաս և փաստացի վտանգի դեպքում:

8) Գյուղատնտեսության զարգացման խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

. ջրագծի քայքայված վիճակը,

.սպառման շուկայի դժվար հասանելիությունը,

. ճանապարհների բացակայությունը:

9) Համայնքում շրջակա միջավայրի պահպանությանը խոչընդոտող գործոններն են՝

. գիտակցական մակարդակի ոչ բարվոք վիճակը:

10) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպմանը խոչընդոտող գործոններն են՝

.գործարար միջավայրի բացակայությունը,

.ձեռնարկությունների բացակայությունը,

.երիտասարդների միգրացիան,

11) Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.երիտասարդների չամուսնանալը,

.երիտասարդ ընտանիքների սոցիալապես պաշտպանված չլինելը,

12) Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացմանը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմաններ իստեղծմանը խոչընդոտող գործոններն են՝

.բնակչության իրազեկվածության պակասը,.բուժ-գործիքների պակասը,ջեռուցման բացակայությունը

13) Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.համայնքում համապատասխան պայմաններ չունենալը,

14) Համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստելուն խոչըդոտող գործոններն են՝

.հեռահաղորդակցման տեխնոլոգիաների գիտելիքների պակասը,

.ինտերնետ կապի անորակությունը,

.տեխնոլոգիաների անհասանելիությունը որոշ ընտանիքներին,

15) Համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով բարեգործության խթանմանը խոչընդոտող գործոններն են`

.համայնքի երիտասարդների կամավորության պակասը,

.հանրային համախմբվածության և մասնակցության թույլ լինելը,

.տեղեկատվական տեխնոլոգիաներին չտիրապետելը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ ԾՆՈՂ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Գյուղացիները գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, քանի որ՝

ա/ հաճախակի են լինում երաշտի տարիներ, որից գյուղացիները կորցնում են բերքի 50%-ը,

բ/ գյուղացին համայնքի պրոբլեմները իր սեփականը չի համարում,

գ/ գյուղացին չի կարողանում իրացնել իր արտադրանքը,

դ/ գյուղացին չի կարողանում կատարել իր հարկային պարտավորությունները

ե/ Գործազրկության պատճառով երիտասարդները մեկնում են արտագնա աշխատանքների: Համայնքում առկա է զանազան հիվանդությունների վտանգ, քանի որ՝

ա/ խմելու ջրի մանրէազերծում և ֆիլտրում չի կատարվում,

բ/ կենցաղային աղբահեռացում չի կատարվում:

### 2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

| *Համայնքի ուժեղ կողմեր* | *Համայնքի թույլ կողմեր* |
|---|---|
| .Միջնակարգ դպրոցի առկայություն.<br>.Բուժ-կետի առկայություն<br>.Հիմնանորոգված համայնքի կենտրոն<br>.Բերրի հողերի առկայություն<br>.Էլեկտրաէներգիայի առկայություն<br>.Մարդկային ռեսուրսներ | .Խմելու ջրի ցանցի անմխիթար վիճակ<br>.Սոցիալապես ծանր վիճակում գտնվող ընտանիքներ<br>.Արտագնա աշխատանքի մեկնողների թվի աճ<br>. Ճանապարհների անմխիթար վիճակ<br>.Տրանսպորտի բացակայություն<br>.Գազի բացակայություն<br>.Փողոցային լուսավորության բացակայություն<br>.Միջնակարգ դպրոցի վերանորոգում<br>.Աշխատատեղերի սակավություն |
| *Հնարավորություններ* | *Սպառնալիքներ* |
| .Խմելու ջրի պաշարի առկայություն<br>.Պետական և միջազգային ծրագրերի մեջ ընդգրկվածություն<br>.Մեծ աշխատուժի առկայություն<br>. Անասնապահության զարգացման նպաստավոր պայմանների առկայություն | .Գյուղ. մթերքների գների նվազում<br>.Տրանսպորտային հանգույցների դժվար հասանելիություն<br>.Խիստ կլիմա /ցրտահարություն/<br>.Կարկուտ<br>.Երաշտ<br>.Արտագաղթ<br>.Ծնելիության նվազում |

## 3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

### 3.1. Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի զարգացման տեսլականն է՝

Ունենալ զարգացած և հզոր համայնք:

Համայնքի ուժեղ կողմերի և միկրո-հնարավորությունների վրա հիմնված վեր հանել համայնքի խնդիրները, և խոչընդոտները հաղթահարելով ՝ ապահովել կայուն, շարունակական զարգացում ու հզորացում:

- Հետևողականորեն բարեփոխումներ կատարելու միջոցով բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել զարգացած, գեղեցիկ և բարեկարգ:
- Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին.
- Գյուղացիներին ապահովել մաքուր խմելու ջրով,
- Զարգացնել բուսաբուծությունն ու անասնաբուծությունը
- Ակտիվացնել բնակչության մշակութային կյանքը,
- Ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը:
- Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թիվը նվազեցնել 20%-ով,
- Համայնքի սեփական տարեկան եկամուտները հասցնել 30%-ով աճի,
- Համայնքում գրանցված բնակիչների թվի աճը նախորդ տարվա համեմատ հասցնել 10%-ով աճի:

### 3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

1) Գործարար միջավայրը բարելավել և ձեռնարկատիրությունը խթանել:
2) Համայնքի գույքը կառավարել:
3) Ակտիվ մշակութային և մարզական կյանքն ակտիվացնել՝ երիտասարդության ներգրավմամբ:
4) Բարելավել համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը:
5) Ապահովել ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը:
6) Ապահովել համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը: Կազմակերպել համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը: Կոմունալ տնտեսության աշխատանքներն ապահովել, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը կազմակերպել,
7) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքը կազմակերպել, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը կազմակերպել:

8) Աջակցել պետության պաշտպանության իրականացման հարցում:
9) Իրականացնել աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումները:
10) Գյուղատնտեսության զարգացումը խթանել:
11) Կազմակերպել համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը:
12) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպումն ապահովել:
13) Համայնքում ծնելիությունը և բազմազավակությունը խթանել:
14) Ապահովել համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը:
15) Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցությունը խթանել:
16) Բարեգործությունը խթանել՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

ԾՐԱԳԻՐ 1

**Որակյալ խմելու ջրով ապահովում »**

(Ոլորտի անվանումը)

**Ջրագծի ներքին ցանցի վերանորոգում**

(Ծրագրի անվանումը)

**Ձյունաշող համայնքի գյուղապետարան**

(Ծրագրի հայտը ներկայացնող կազմակերպությունը, ստորաբաժանումը կամ խումբը)

**Ծրագրի ընդհանուր արժեքը՝** 5,000.0 դրամ

**Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը**

Ծառայությունների մատուցում , Սպասարկում **,** Ընթացիկ աշխատանքներ

<u>**Վերանորոգում**</u> **.** Վերականգնում **.** Ընդլայնում **.** Փոխարինում **.**Նորը **.** Այլ

**Ծրագրի հիմնավորումը**

Ձյունաշող համայնքում կոմունալ տնտեսության աշխատանքները կազմակերպելու նպատակով կիրականացվի «Ջրագծի ներքին ցանցի վերանորոգում» ծրագիրը: Ծրագրի անմիջական նպատակն է՝ համայնքաբնակներին բավարար քանակի մանրէազերծված ջրով : Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝

1.Վերանորոգված խմելու ջրի գործող ջրագիծ, կառուցված երկրորդ ջրագիծ և կանոնակարգված ջրի բաշխում

**Ծրագրի նպատակները**

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ, մեխանիզացիա, սարքավորումներ և անհրաժեշտ գումարի 3%-ը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը: Ծրագրի հիմնական շահառուներն են Ձյունաշող համայնքի բնակիչները:

**Ծրագրի խնդիրները**

Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2021թ.:

Ծրագրի համառոտ նկարագրություն. Կատարել չափագրում: Կազմել պլանային նախագիծ և բյուջե: Ձեռք բերել խողովակներ 4 կմ-ի համար, էլեկտրող:Գործող ջրագծի վնասված խողովակները փոխարինել նորով: Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, ստանալ համապատասխան գումարը և կազմակերպել աշխատանքները: Կատարել համայնքային ներդրումներ: Ծրագրի իրականացումից հետո համայնքի բոլոր բնակիչները կապահովվեն բավարար քանակի մաքուր ջրով:Համայնքում առկա զանազան հիվանդությունների վտանգը կվերանա:

## Ծրագիր 2

**Տնտեսական հարաբերություններ. Ճանապարհային տնտեսություն**

(Ոլորտի անվանումը)

**Ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում**

(Ծրագրի անվանումը)

**Չյունաշող համայնքի գյուղապետարան**

(Ծրագրի հայտը ներկայացնող կազմակերպությունը, ստորաբաժանումը կամ խումբը)

**Ծրագրի ընդհանուր արժեքը՝** 3,000.0 դրամ

**Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը**

Ծառայությունների մատուցում , Սպասարկում , Ընթացիկ աշխատանքներ

Վերանորոգում . Վերականգնում . Ընդլայնում . Փոխարինում .Նորը . Այլ

**Ծրագրի հիմնավորումը**

Համայնքի ներհամայնքային փողոցները կարիք ունեն լուրջ վերանորոգման ու բարեկարգման:

Համայնքում շահագործվում են 19 մարդատար մասնավոր ավտոմեքենաներ, որոնք մշտապես երթևեկում են ներհամայնքային անբարեկարգ փողոցներով, ժամանակի ընթացքում շարքից դուրս են գալիս և դառնում շահագործման համար ոչ պիտանի: Անբարեկարգ փողոցները ստեղծում են լրացուցիչ դժվարություններ ու անհարմարություններ նաև հետիոտների համար:

**Ծրագրի նպատակները**

Ներհամայնքային կենտրոնական փողոցները բերել բարեկարգ վիճակի՝ վերացնելով փողոցների ջրափոսերը և դրանք դարձնելով անցանելի ու հարմարավետ հետիոտների և տրանսպորտային միջոցների երթևեկության համար տարվա բոլոր եղանակներին:

**Ծրագրի խնդիրները**

1. Ներհամայնքային կենտրոնական փողոցների որոշ հատվածների հողային, խճապատման և բարեկարգման աշխատանքների իրականացումը նախատեսել 2017-18թթ. ընթացքում:
2. Համայնքի 2017-18թթ. բյուջեներում նախատեսել 1000.0 - հազարական դրամ գումար:
3. Մինչև 2017-18թթ. յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ը նախապատրաստել փողոցների վերանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը և վարձակալել մասնավոր բեռնատար ավտոմեքենաներ՝ շինարարական աշխատանքներն իրականացնելու համար:

Մինչև 2017-18թթ. յուրաքանչյուր տարվա նոյեմբերի 1-ը իրականացնել և ավարտել ներհամայնքային փողոցների վերանորոգման և բարեկարգման աշխատանքները

# Ծրագիր 3

**Տնտեսական հարաբերություններ. Ճանապարհային տնտեսություն**

(Ոլորտի անվանումը)

## Ներհամայնքային ճանապարհների և փողոցների արտաքին լուսավորության համակարգի անցկացում

(Ծրագրի անվանումը)

## Չյունաշող համայնքի գյուղապետարան

(Ծրագրի հայտը ներկայացնող կազմակերպությունը, ստորաբաժանումը կամ խումբը)

**Ծրագրի ընդհանուր արժեքը՝** 3,500.0 հազար դրամ

**Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը**

▪Ծառայությունների մատուցում ▪ Սպասարկում ▪ Ընթացիկ աշխատանքներ
▪Վերանորոգում ▪ Վերականգնում ▪ Ընդլայնում ▪Փոխարինում ▪ Նորը ▪Այլ

**Ծրագրի հիմնավորումը**

Ներհամայնքային փողոցները և ճանապարհները հագեցած չեն արտաքին լուսավորության համակարգով, որը որոշակի վտանգ, անհարմարություններ ու դժվարություններ է առաջացնում հետիոտների և տրանսպորտային միջոցների համար: 2018թ. ընթացքում ներհամայնքային կենտրոնական փողոցների վերանորոգումից և բարեկարգումից հետո անհրաժեշտ է դրանք վերազինել արտաքին լուսավորության համակարգով:

**Ծրագրի նպատակները**

Բարձրացնել ներհամայնքային կենտրոնական փողոցներով երթևեկության անվտանգության մակարդակը՝ դարձնելով դրանք լուսավոր, գեղեցիկ ու հարմարավետ համայնքի բնակիչների, զբոսաշրջիկների և տրանսպորտային միջոցների համար:

**Ծրագրի խնդիրները**

1. Ձեռք բերել որևէ դոնոր կազմակերպության համաձայնությունը՝ համայնքի հետ համատեղ համաֆինանսավորելու ծրագիրը (ծրագրի արժեքի համապատասխանաբար 43% և 57% համամասնությամբ):
2. Մինչև 2018թ. մայիսի 1-ը պատվիրել և պատրաստել ներհամայնքային կենտրոնական 1-ին փողոցում միակողմանի արտաքին լուսավորության համակարգի անցկացման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը՝ նախատեսելով 25 մետաղյա հենասյուներ՝ 4.5 մ բարձրությամբ, 70 մմ տրամագծով, իրարից 40 մ հեռավորությամբ, յուրաքանչյուր հենասյան վրա՝ 1 լուսային սարքավորում, և էլեկտրահաղորդալարեր՝ 10 մմ հաստությամբ, 1 կմ երկարությամբ:
3. Համագործակցել և կնքել պայմանագիր <Հայաստանի էլեկտրացանցեր> ՓԲԸ <Հյուսիսային> մասնաճյուղի հետ՝ տրամադրելու փողոցների արտաքին լուսավորության համակարգի անցկացման աշխատանքներն իրականացնող մասնագիտական (տեխնիկական) խումբ:
4. Ձեռք բերել արտաքին լուսավորության համակարգի հենասյուները, լուսային սարքավորումները և էլեկտրահաղորդալարերը:
5. Իրականացնել ներհամայնքային կենտրոնական 1-ին փողոցի արտաքին լուսավորության համակարգի անցկացման աշխատանքները և մինչև 2018թ. հոկտեմբերի 1-ն այն հանձնել շահագործման:

## 4. ՀՁԾ ֆինանսավորում

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերը ֆինանսավորվելու են՝

- Համայնքի սեփական եկամուտներից,
- Ներքին պաշտոնական դրամաշնորհներից
- Արտաքին պաշտոնական դրամաշնորհներից,
- Բարեգործություն/նվիրատվություններից
- Այլ աղբյուրներից,

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացման համար չկան առկա միջոցներ, նրանց համար անհրաժեշտ է գումար ապահովել:

## 5. ՀԶԾ մոնիթորինգ

ՀԶԾ մոնիթորինգը կիրականացվի համաձայն Մոնիթորինգի անձնագրով (Հավելված 3) սահմանված ցուցանիշների և ժամանակացույցի:

# Ծ Ր Ա Գ Ր Ի   Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

« Զրագծի ներքին ցանցի վերանորոգում »

(Ծրագրիանվանում)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Զյունաշող համայնքում կազմակերպել կոմունալ տնտեսության աշխատանքները: | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ | Համայնքաբնակներին բավարար քանակի մանրէազերծված ջրով | | | | | | |
| | Ցուցանիշներ աճ (%) | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | 100 | 102 | 105 | 110 | 120 | 150 |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ | 1. Վերանորոգված խմելու ջրի գործող ջրագիծ,կառուցված երկրորդ ջրագիծ | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | 0 | 3 | 7 | 7 | 7 | 7 |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. Գործող ջրագծի վնասված խողովակները փոխարինել նորով:<br>1.2 Երկրորդ ջրագծի խողովակաշարն անցկացնել՝ միացնելով գործող ջրագծի ներքին ցանցին:<br>1.3. Պարբերաբար կատարել խմելու ջրի մանրէազերծում սանէպիդկենտրոնի օգնությամբ:<br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.2. Խողովակները միացնել:<br>2.3. Համայնքաբնակներին աջակցել, որպեսզի բնակարաններից միացումներ տան դեպի կոյուղագիծ: | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր՝ 1 մլն դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 2 մլն դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 3 մլն դրամ: | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | Աշխատուժ, մեխանիզացիա, դրամական միջոցներ | | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | դրամական միջոցների ձեռքբերումը | | | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | Զյունաշող համայնքի բոլոր բնակիչները: | | | | | | |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | Սկիզբ՝ 2017թ.- Ավարտ՝ 2021թ. | | | | | | |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Ծրագրի իրականացումից հետո համայնքի բոլոր բնակիչները կապահովվեն բավարար ջրով:<br>Ծրագրի իրականացմամբ համայնքի բոլոր շահառուները կօգտվեն : | | | | | | |

# Ծ Ր Ա Գ Ր Ի   Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

## « ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ »

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Համայնքային ճանապարհային ենթակառույցների պահպանություն</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="7">Բարեկարգ ճանապարհներ և վերանորոգված ջրհեռացման առուներ ունենալը</td></tr>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>Բարեկարգ ճանապահի ավելացում քառ. մետր</td><td></td><td>3000</td><td>0</td><td>0</td><td>0</td><td>0</td></tr>
<tr><td rowspan="8">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">1. Վերանորոգված ջրհեռացման առուներ ունենալը</td></tr>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>Վերանորոգված ջրհեռացման առուների ավելացում գմ</td><td></td><td>1000</td><td>0</td><td>0</td><td>0</td><td>0</td></tr>
<tr><td colspan="7">2. Բարեկարգ ճանապարհ ունենալը</td></tr>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>Շեբենապատ ճանապարհների ավելացում քառ.մետր</td><td>0</td><td>3000</td><td>0</td><td>0</td><td>0</td><td>0</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1 նախագծի պատվիրում<br>1.2 ֆինանսական միջոցների հայթայթում<br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1 անհրաժեշտ նյութերի ձեռք բերում<br>2.2 ճանապարհների շեբենապատում</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝ 1 մլն դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 2 մլն դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 3 մլն դրամ.</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">1. ֆինանսական միջոցների առկայություն<br>2.շեբենի առկայություն</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">Անձրևներ , սելավներ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Ծրագրի իրականացմամբ համայնքի բոլոր շահառուները կօգտվեն :</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2017թ- 2018թ</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Անխափան կաշխատեն տրանսպորտային միջոցները տարվա բոլոր եղանակներին:</td></tr>
</table>

# Ծ Ր Ա Գ Ր Ի   Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

## « ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ »

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Համայնքի բնակավայրի կառուցապատումը և բարեկարգումը</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="7">Ունենալ լուսավոր և գեղեցիկ համայնք</td></tr>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
